Հաստատում եմ՝
Վանաձորի № 3 հիմն. դպրոցի
Տնօրեն՝ / /Հ.Կոստանյան

Ստուգված է
ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ՝
Ն. Պողոսյան / /

Լոռու մարզի քաղաք Վանաձորի Հ. Թումանյանի անվան №3 հիմնական դպրոց

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

II ա դասարան

դասվար՝ Լ. Մկրտչյան

2023-2024 ուստարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) II ա դասարանում սովորում են 35 աշակերտ՝ 23 տղա, 12 աղջիկ: Դասարանում ունենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող նորեկ աշակերտ: Երեխաները նրան ընդունեցին սիրով: Դասարանը կազմակերպված է, կարգապահ: Ձևավորվել է համերաշխ կոլեկտիվ:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում: Ուշադրություն դարձնել աշակերտական կոլեեկտիվի ստեղծմանը: Երեխաների մոտ ձևավորել ընկերասիրություն, հանդուրժողականություն, կարգապահություն, մաքրություն, համագործակցություն, փոխօգնություն: Դաստիարակել գիտակցական վերաբերմունք ուսման նկատմամբ: Զարգացնել երեխաների մոտ ինքնուրույնություն, աշխատասիրություն, ճշմարտախոսություն, ապրումակցման զգացում: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Աշակերտներին ծանոթացնել հոգևոր արժեքներին, մշակութային ժառանգությանը, հաղորդակից դարձնել մեր ժողովրդի անցյալին: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք մեր երկրի խորհրդանիշների նկատմամբ: Իմանալ դրանց նշանակության մասին:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ստեղծել հաճելի, հարմարավետ դասարանական միջավայր: Նպաստել գեղեցիկի ճիշտ ընկալմանն ու ձևավորմանը: Երեխաների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության, կրթության վերաբերյալ կազմակերպել զրույցներ բանակի, մերօրյա հերոսների վերաբերյալ: Սերմանել քաջություն, հպարտության զգացում: Առաջացնել սեր և հարգանք հայրենիքի պատմական հերոսների նկատմամբ: Կարևորել բանակի դերն ու նշանակությունը:

4. Ֆիզիկական դաստիարակություն Երեխաներին տեղեկություն տալ ֆիզիկական կուլտուրայի առողջարարական նշանակության մասին: Նպաստել ճիշտ կեցվածքի ձևավորմանը, ճիշտ սնվելուն, առողջ սննդակարգին: Ծանոթացնել անձնական հիգիենայի կանոններին: Առաջնորդվել «Առողջ մարմնում, առողջ հոգի» սկզբունքով:

5. Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Նրանց մեջ ձևավորել աշխատասիրություն, համբերատարություն, կամային հատկանիշներ: Զրուցել մասնագիտությունների կարևորության մասին:

6. Բնապահպանական դաստիարակություն Դրսևորել հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի, բույսերի, ծառերի, կենդանիների նկատմամբ: Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում:

7. Դպրոց-ընտանիք կապը Մշտապես ամուր պահել ծնող-ուսուցիչ կապը, ծնողների հետ համագործակցել, ներգրավել դաստիարակչական աշխատանքների մեջ: Հաճախակի կազմակերպել զրույցներ, անհատական խորհրդատվություններ ծնողների, ընտանիքի անդամների հետ: Երեխայի զարգացման ընթացքի վերաբերյալ փոխադարձ տեղեկություն տալ: Ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերություններ սահմանել: Ծնողներին ներգրավել աշակերտների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման աշխատանքների մեջ: